ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2025 թվականի № ----Ա

«ՍՄԱՐԹ ՆԵԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ «ՍՄԱՐԹ ՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) մինչև 2025 թվականի հունվարի 30-ը պետք է Հանձնաժողով ներկայացներ Որոշման №2 և №6 հավելվածներով սահմանված ձևերին համապատասխան հաշվետվությունները (այսուհետ՝ Հաշվետվություններ), որոնք, սակայն, ներկայացրել է 2025 թվականի փետրվարի 3-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո,

բ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը Ընկերության նկատմամբ 2025 թվականի փետրվարի 26-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 26-ի №ՄՄ/34.2-Մ2-7/852-2025 գրությամբ,

գ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ հայտնել է, որ ուժեղ քամու հետևանքով խափանվել է հոսանքը, որի արդյունքում Ընկերության համակարգերը որոշակի ժամանակահատված եղել են անաշխատունակ, ինչը խանգարել է Հաշվետվությունների ժամանակին պատրաստմանը և ներկայացմանը,

դ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված

պահանջները, ինչ վերաբերում է Հաշվետվությունները սահմանված ժամկետում ներկայացնելուն խանգարող հանգամանքների վերաբերյալ Ընկերության դիտարկմանը, ապա Ընկերության ներկայացրած փաստաթղթերով չի հիմնավորվել, որ նշված պարտավորությունների չկատարումը հետևանք է ֆորս մաժորի, այն է՝ առկա են եղել անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են իր կամքից անկախ, խոչընդոտել են իր գործունեությանը կամ հանգեցրել համապատասխան պարտավորությունների չկատարմանը՝ հակառակ իր գործադրած ջանքերի, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում, Ընկերությունը դրա վերաբերյալ հնարավորինս սեղմ ժամկետում չի տեղեկացրել Հանձնաժողովին,

ե) Ընկերությունը մինչև 2024 թվականի մայիսի 25-ը պետք է Հանձնաժողով ներկայացներ Որոշման №5 հավելվածով սահմանված ձևին համապատասխան հաշվետվությունը, սակայն, ներկայացրել է 2024 թվականի մայիսի 29-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2024 թվականի սեպտեմբերի 11-ի №304-Ա որոշմամբ, որն օրինական ուժի մեջ է մտել 2024 թվականի սեպտեմբերի 17-ին և անբողոքարկելի է դարձել 2024 թվականի նոյեմբերի 18-ին, նախազգուշացրել է Ընկերությանը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ և 19-րդ հոդվածների 2-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար Ընկերությանը տուգանել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը պարտավորեցնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով սահմանված գումարը №900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի

Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2025թ.